# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«Բերնար»ՓԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-25 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | «Բերնար»ՓԲԸ | «Բերնար»ՓԲԸ | «Բերնար»ՓԲԸ | «Բերնար»ՓԲԸ | Կապտասև Dark Navy Blue, անջրանցիկ 100% պոլիէսթեր կտորից, տեսակարար կշիռը՝ 140 գ/մ2, ±3%: Մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից: Կտորի ներսի կողմից մեմբրանե ծածկույթով, օձիքը կանգուն, հանովի ներդիրով: Օձիքը երկակի է, ներսում շղթայի տակ նախատեսված է գլխարկ: Գլխարկը ունի կարգավորիչ, կպչուն ժապավեն: Օձիքի մեջտեղում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներկարված է կախիչ: Առաջամասը բաղկացած է 4 մասից, 2-րդ մասի ձախ կողմում կարվում է 38մմ երկարությամբ օղակ՝ տեսախցիկի համար և կրծքանշանի ներդիր, իսկ աջ կողմի 2-րդ մասում կարվում է 35մմ երկարությամբ օղակ՝ ռադիոկայանի խոսափողի համար: 3-րդ մասի աջ և ձախ կողմերում հորիզոնական գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և YKK որոկի պլաստմասե շղթայով փակվող, ինչպես նաև աջ և ձախ կողմերի կենտրոնական մասում ուղղահայաց գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով, 4-րդ մասի աջ և ձախ կողմերում թեք գրպաններ՝ ներկարված ամբողջական կափույրով և YKK որոկի պլաստմասե շղթայով փակվող: Դիմացից ամբողջական կափույրով ներկարված YKK որոկի պլաստմասե շղթայով և կոճգամներով: Կողային և կրծքային գրպանները՝ կայծակաճարմանդով: Կիսավերարկուն կողքերից ներքևի մասում անջատվում է շղթայով, որի վրա կան կարգավորիչներ: Թևքերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ծայրերին ներկարված են էլաստիկ ժապավեններ՝ կարգավորող կպչունակով: Գոտին կարված է կիսավերարկուին, որի մեջ մշակված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուն ներսից՝ ներդիրի ձախ կրծքամասի հատվածում ունի ուղղահայաց գրպան: Ընդարձակ կտրվածք՝ շարժունակությունն ապահովելու համար: Ներդիրը կապտասև գույնի փլիս կտորից, ամբողջությամբ առանձնանում է YKK որոկի պլաստմասե շղթայով, որի վրա կարված է վիսկոզից աստառ: Ներդիրի թևքերը ներսից նույնպես առանձնանում են YKK որոկի պլաստմասե շղթայով: Թիկունքի վերևի մասում կարվում է սպիտակ գույնով ջակարդով ասեղնագործված 28X7,5սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում 13X2,5սմ կարվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» մակագրությամբ բառերը: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության թևքանշան՝ ջակարդով ասեղնագործած: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Ուսադիրները կարվում են նույն կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ պլաստմասե կոճգամով, իսկ ուսերի մասում կարված են: Կիսավերարկուն պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը և լվանալու պայմանները: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Փաթեթավորումը՝ տեսականին 3 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում: հատ 18798 122 187 000 6500 Շիրակի 3-րդ նրբ, 6շ. 6500 Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 50 օրվա ընթացքում՝ 975 հատ, 80 օրվա ընթացքում՝ 1300 հատ, 170 օրվա ընթացքում 1950 հատ, 260 օրվա ընթացքում 2275 հատ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

«Բերնար» ՓԲԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-25 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |